ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

28 սեպտեմբերի 2012թ. թիվ 463

ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. մարտի 20-ի թիվ 194-Ն և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012թ. մարտի 24-ի թիվ 5-Ն համատեղ հրամանով հաստատված «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթի անցկացման կարգը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթի մարզային փուլն անցկացնելու նպատակով ստեղծել մարզային մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. սեպտեմբերի 28
ք.Վանաձոր